ՀՏԴ 82.09 Գրականագիտություն

ՍԱՀՅԱՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միրուն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ *արվեստագետ, բնութագրություններ, կենդանի դիմանկարներ, գլուխգործոց, գրականագետ, հայրենասիրություն, հանճարեղ, դրոշակակիրներ, հոգևոր արժեք, գրաքննադատներ:*

Ключевые слова: *художник, описание, живые портреты, шедевр литературы, патриотизм, гений, знаменосцы, духовное значение, литературоведы.*

Keywords: *artist, description, vital portraits, a masterpiece of literature, patriotism, genius, flag bearers, spiritual value, literary critics.*

С. Багдасарян

А. Саиян о деятелях культуры

В статье отражены те заключения и выводы известного поэта литературы современного периода А. Саияна, где он отзывается о Туманяне, Исаакяне, Чаренце, Бакунце, Ширазе, Севаке и о произведениях других деятелей искусства, характеризует их гуманистические образы, посвятив им оды. Тем самым, Саиян, с одной стороны, показал свою неподкупную и общительную сущность, с другой стороны, произвел обзор творчества своих коллег - товарищей по перу, что стало одной из занимательных страниц его поэзии.

S. Baghdasaryan

A. Saiyan about Cultural Figures

The article reflects those conclusions of the famous poet of the Modern literature period A.Saiyan, where he has written about Tumanyan, Isaakyan, Charents, Bakunts, Shiraz, Sevak and others, characterizing their humanistic images by devoting them odes.

Thus, on the one hand, Saiyan showed his integrity and sociable nature, on the other hand, made the review of creativity of the colleagues - companions on a feather that became one of entertaining pages of his poetry.

Հոդվածում բացահայտվել է նորագույն շրջանի անվանի բանաստեղծ Համո Սահյանի այն անդրադարձումները, ուր բանաստեղծն արտահայտվել է Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի, Բակունցի, Շիրազի, Սևակի և մշակույթի այլ գործիչների երկերի մասին, բնութագրել է նրանց մարդկային կերպարները, նրանց նվիրել ձոներգեր: Դրանով Սահյանը մեկ այլ կողմից ցույց է տվել իր անկաշառ և մարդամոտ բնավորությունը, ինչպես նաև տվելիր գործընկերների ստեղծագործության բնութագրման ուրվագծեր, որը և դարձել է նրա քնարերգության հետաքրքիր էջերից մեկը:

Սահյան արվեստագետը հայ գրողների և մշակույթի գործիչների մասին արտահայտել է կարծիքներ, գրել բանաստեղծություններ, որոնք, նրա ողջ ստեղծագործության հետ միասին, նույնպես հետաքրքրում են ընթերցողներին, քանի որ դրանց միջոցով ավելի լավ ենք ճանաչում ոչ միայն հեղինակին, այլև՝ նրա միջոցով՝ նաև արվեստակից-բարեկամներին:

«Սահյանը,-գրում է Դ. Գասպարյանը,- տարբեր առիթներով կարծիքներ է հայտնել անցյալ և ներկա ժամանակների գրողների մասին, նրանց նվիրել բանաստեղծություններ: Այսպես ևս ձևավորվում է գրողի գեղագիրության մեկ էջը՝ որպես ինքն իրեն ճշտող արձագանք կամ անդրադարձ»[1]:

Ում և ինչի մասին գրել է Սահյանը՝ Քուչակի, Սայաթ-Նովայի, Թումանյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Կապուտիկյանի թե Սարյանի, Սևակի, Մահարու կամ Բակունցի, տվել է նրանց մասին խորիմաստ բնութագրություններ, բացահայտել նրանց արվեստի կենդանի շունչն ու ինքնատիպ ոճը: Ըստ Սահյանի՝ բանաստեղծի խնդիրն է «քառսայինից առանձնացնել նեդաշնակությունը, մարդու միջից հանել ագահությունը, ծուլությունը, չարությունն ու նախանձը»: Նա այն կարծիքին է, թե մարդկությունը քանի կա, իր ցավն իր հետ տանելու է, ուրեմն՝ լինելու է բանաստեղծությունը:

[1] Գասպարյան Դ., «Համո Սահյան», Երևան, 2013թ., էջ 56:

Համո Սահյանը գեղագետ է բառիս ամենալայն իմաստով. արվեստի լեզվով է խոսել նա իր ժողովրդի,իր բազում ընթերցողների հետ: Նույն այդ լեզվով է խոսել իր ժողովրդի հետ նաև արվեստի մեծատաղանդ երախտավոր՝ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը: Բնանկար կերտող և մարդկային ոգու երկու մեծանուն արվեստագետների հոգեհարազատությունը հասկանալի է: Մասրենու պատկերը, որպես կերպար, մեր քնարերգություն բերեց Սահյանը: Զուտ սահյանական այս անզուգական կտավը նա սիրով նվիրեց սիրելի նկարչին: Պատահականություն չկա. սիրելիին նվիրում են ունեցածի ամենանվիրականն ու թանկը: Ու եթե հիշենք, որ Սահյանի« բնության պատկերասրահում» շատ-շատ են հրաշք բնանկարները, կտեսնենք, որ նա իր գլուխգործոցներից մեկը նվիրել է անվանի նկարչին.

Մասրենի
Մարտիրոս Սարյանին
Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում…

Համո Սահյան և Ակսել Բակունց: Երկուսն էլ բնության գեղագետներ: Երկուսն էլ բնության քանդակագործներ՝ մեկն արձակի վարպետ, մյուսը՝ չափածոյի: Հայտնի է նաև, որ Բակունցն ուսուցչություն է արել այն նույն Լոր գյուղում, ուր ծնվել է Սահյանը: Ուրեմն՝ պատահականություն չէ, որ Սահյանը նրան է նվիրել երկու բանաստեղծություն՝ «Ակսել Բակունցին» (1947), «Միրհավի կանչն ես տանում դարերին» (1959): Առաջին բանաստեղծության մեջ պատկերված է լեռներից հոսող Բասուտա գետը, ծոր տալով խոսող Աթա ապերը: Ահա ոտքերը մինչև ծնկները բաց Մինան գետի մեջ գորգ է լվանում, իսկ Լորի հինավուրց բլրակի վրա Խոնարհ աղջկա շիկնած հայացքն է: Հնձան է մտնում ծեր Դիլան Դային՝ հուշերում թևին տվող միրհավը: Իր ծիրանի փողն է հնչեցնում Հազրոն.

Հազրոն նստել է օջախի քարին,
Հիշում է կորած երկիրն ու հողը,
Տխուր նայում է Հայկական Պարին
Եվ նվագում է ծիրանի փողը:

Անվանի գրականագետ Դ. Գասպարյանը նշում է. «Սահյանն Ակսել Բակունցին կարող էր գրական հայր կոչել: Այն, ինչ Բակունցն արեց արձակով, Սահյանն արեց պոեզիայով: Ընդհանրության հիմքը բնաշխարհի այբուբենը նույն բնաշխարհի մարդու հոգով ու աչքով կարդալու մեջ է: Բակունցյան հերոսների լռությունը փոխանցվեց ոչ միայն Սահյանի մարդկային նկարագրին, այլև նրա բանաստեղծություններին»[1]:

Սահյանն ունի անզուգական հայրենասիրական շատ քերթվածքներ: Սակայն նրա հայրենասիրությունը նորօրյա չէ. բանաստեղծը եզրեր է գտնում Ավարայրի ճակատամարտի և «Վարդանանքի» հետ: «Խոսք հիշատակի» բանաստեղծությունը նա նվիրել է Դերենիկ Դեմիրճյանին.

Դու եկել էիր Ավարայրից,
Քո ձեռքերի մեջ թուրն էր Վարդանանց,
Դու եկել էիր հինգերորդ դարից,
Ավանդում էիր մեր փառքերն անանց:

Անվանի բանաստեղծը պատկերավոր, ընդամենը մի քանի տողով ներկայացնում է Վարդան Մամիկոնյանի հերոսության և Մեսրոպ Մաշտոցի սխրանքի էությունը.

Ավետիք Իսահակյանին Սահյանը նվիրել է նաև «Էքսպրոմտ» բանաստեղծությունը, որտեղ գրողը նրան «նստեցնում է» Սևանի կղզիներից մեկում, ուր Վարպետը Գեղամա

[1] Գասպարյան Դ., «Համո Սահյան», Երևան, 2013թ., էջ 58:

լեռների գեղեցկուհու շառաչն է լսում և դիմում է ճայերին՝ ընդգծելով իր կերպարի ամրությունն ու անսասանությունը.

- Հոգնաբեկ ճայե'ր, իջեք ուսերիս,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Սահյանը ժամանակակից բանաստեղծներից Շիրազին հանճար էր անվանում: Եվ պատմեց մի դեպք այդ առիթով. «Շիրազի բերնից բառը թռչում էր՝ ինչպես թռչունը բնից: Ինքն էլ սա գիտեր: Պատասխանը նույն վայրկյանին էր տալիս: Մի օր ինձ մի բան ասաց, ես պատասխանն երկրորդ օրը տվի: Ժպտաց՝ էդ բանը, որ երեկ ասեիր, դու էլ հանճարեղ կեղնեիր ինձ պես»[1]:

Գ. Սարյանի «Քրիզանթեմ» ծողովածուն Սահյանը բնորոշելու է իր իսկ պոեզիային հետևյալ տողերով. «Շնչառության պես բնական են բանաստեղծի տողերը և արցունքի պես ջինջ»[2]: 1957թ. Սահյանը գրում է «Բանստեղծը» վերնագրով մի ոտանավոր՝ նվիրված Գեղամ Սարյանին.

Ասում են, թե՝ բանաստեղծ, ի՞նչ է մնացել,
Քո գարունները եկել են, անցել,
Աշնան եղյամն է իջել մազերիդ վրա,
Շուտով ճամփադ կփակի բուքը ձմեռվա…
Չեմ սփոփում ինձ բնավ, երբ տեղն է գալիս:

Հայ գրականության պատմության մեջ կան հսկա անհատականություններ, որոնք ոչ միայն ոսկե էջ բացեցին մեր բազմադարյա մշակույթի պատմության մեջ, այլև դարձան նորի և հզորի համարձակ դրոշակակիրներ: Նման օրինակ է Պարույր Սևակ, ով գրականություն մտավ այնպես, ինչպես փորձված այգեպանն է այգի մտնում: Հոգևոր կորուստներ հայտնաբերող, նոր խարույկներ վառած բանաստեղծն ինքը դարձավ կորուստ՝ մեծ վիշտ պատճառելով իրեն ծնած ժողովրդին: Նրա գրչակիցներից շատերը սգացին մեզանից անժամանակ հեռացած բանաստեղծ-հայրենասերի մահը: Նրանց հետ՝ նաև Սահյանը, ով առանձնահատուկ սիրով ու ջերմ զգացումներով էր կապված Սևակի հետ: «Ոչ մի հարված,- գրում է Սահյանը ,- այսքան հանկարծակի ու ծանր չէր իջել իմ գլխին: Ոչ մի վիշտ այսքան արցունք չէր խլել իմ աչքերից : Ոչ մի կորուստ չէր բերել այսքան ախ ու ափսոսանք:

Հայ դպրության բոլոր անշիրիմ նահատակների համար խեղդած արցունքն էր, որ ժողովուրդը հեղեց Պարույր Սևակի սուրբ դագաղի վրա…»[3]: Սահյանը գրել է նաև մի բանաստեղծություն «Պարույր Սևակին» վերնագրով, որտեղ իր ցավն ու վիշտն է արտահայտել կոմիտասյան իր մորմոքի չլինելու հետ՝ համարելով նրան օդ ու ջուր, բահի զնգոց, խոփի վար, մարգի համեմ, լանջի ծաղիկ, բանակ, զորք, տոհմի շյուղ, հրթիռի հրացոլք, երդիկի ծուխ…

Հիմա ես ո՞ւմ հետ կիսեմ
Հավատամք ու հաց,
Եվ ո՞ւմ զրույցը լսեմ
Մինչև լուսաբաց…

Սահյանը շատ մոտ բարեկամ էր համարում բալկար մեծ բանաստեղծ Կայսին Կուլիևին, որին նվիրել է շատ բանաստեղծություններ, նամակագրական կապ ուներ նրա հետ: 1972թ.մարտի 16-ին իր ռուսերեն թարգմանված գիրքն ուղարկելով ընկերոջը՝ մակագրում է.

«Սիրելի Կայսինին
Գալիս ես որպես իրարանցում

[1] Հովնաթան Հ., «Խոսում է Համո Սահյանը», Երևան, 1992, էջ 9:
[2] Սահյան Հ., «Քրիզանթեմ», Գրական թերթ, 1968թ., թիվ 20:
[3] «Գրական թերթ», 26,06,1971:

Եվ անց ես կենում որպես երազ,
Կյա'նք իմ, դու ձրի ներկայացում,
Բայց ինչքան թանկ ես նստում վրաս»[1]:

Աշոտ Գրաշին այն արվեստագետներից է, ով հանդես է եկել 19-րդ դարի 30-ական թվականների սկզբից և մոտ քառասուն տարվա ստեղծագործական կյանքի ընթացքում հնչեցրել հայրենիքին, բնությանը, սիրուն, աշխատանքին նվիրված բազմաթիվ երգեր, որոնք սիրվել են ընթերցողի կողմից: Նրա շատ ու շատ բանաստեղծությունների տեքստերով հայ երգահանները ստեղծել են սրտառուչ երգեր, որոնք երգվում են ոչ միայն արհեստավարժ երգիչների, այլև սիրող-կատարողների կողմից:

Գրաշին իր ստեղծագործությամբ դարձավ նորագույն շրջանի հայ բանաստեղծության դեմքերից մեկը, ով իր նպաստը բերեց գրական շարժմանը՝ ստեղծելով ճշմարիտ և ներշնչված պոեզիա: Գրողի վաստակը և հատկապես նրա ղարաբաղյան երգերը հաշվի առնելով՝ Սահյանը նրան է նվիրել «Բլբուլները զարգանան» բանաստեղծությունը.

Գիտեն և' դուռ, և' դրկից,
Որ քեզ չեմ տա իմ գրկից,
Որ դու կաս իմ տաղերում,-
Իմաստուն ես էն գլխից…

Բոլորին ծանոթ է բանաստեղծ Թաթուլ Հուրյանի անունը: Նա իր կյանքը նվիրեց հայրենիքի փրկության ճանապարհին՝ հերոսի իր անունը գրելով Նիկոլայ Օստրովսկու, Արկադի Գայդարի, Ալեքսանդր Մատրոսովի և Հունան Ավետիսյանի կողքին: Սահյանի՝ մարտիկ-բանաստեղծին նվիրված բանաստեղծության խորագիրն է՝ «Վերջերգը որպես նախերգ».

Մտավ կռվի դաշտ ու մեռավ կռվում…
Ու երբ պառկած էր, ջերմ հողի վրա,
Կարծես պոեմի վերջերգն է գրվում
Կրակված սրտի արյունով նրա:

Սահյանը դրական վերաբերմունք ուներ ճշմարիտ և բեղմնավոր գործեր ստեղծած գրաքննադատների նկատմամբ. Վ. Մնացականյան, Ս. Արզումանյան, Ս. Սարինյան, Ս. Աղաբաբյան, Դ. Գասպարյան, Ս. Սողոմոնյան… Ահա նրա կարծիքը Դավիթ Գասպարյանի մասին. «Գրականագետների՞ց: Ասեմ: Էն օրը Դավիթի մասին խոսեցինք, Դավիթ Գասպարյանը հրաշալիների մեջ է: Էդ ի՜նչ նվիրում ունի, խելքի մեջ խիղճն էլ է: Իմաստուն, ազնիվ տղա է: Գնում է դեպի ճշմարտությունը՝ դեպի իր և իր ազգի բաց վերքը: Էնտեղից է գալիս ու էնտեղ գնում: Մի խոսքով, նվիրյալ է: Իսկ նվիրյալը իրեն զոհել գիտե»[2]:

Բարձր գնահատելով երիտասարդ սերնդին՝ Սահյանը նաև խիստ էր ու պահանջկոտ՝ գտնելով, որ ճշմարիտ արվեստի ճանապարհը դժվարին է և բարձրարժեք գործեր ստեղծելու համար պետք է լուրջ վերաբերվել գրելու դժվարին արվեստին, դառնալ հմուտ անհատականություն և մոտ կանգնել ժողովրդական ակունքներին:

Սահյանը երգեր է գրել նաև Վ. Դավթյանի, Ս. Հարությունյանի, Վ. Կարենցի, Մ. Մարգարյանի, Գ.Էմինի, Ս. Տարոնցու, Գ. Բորյանի և այլ գրողների մասին:

Որքան էլ զարմանալի, բայց Սահյանը երգ է նաև նվիրել ինքն իրեն, թեպետ իր բոլոր բանաստեղծությունները իր ապրումներն են ու խոհերը, իր անսպառ սերն առ հայրենիք, իր ներշնչանքներն ու հավատո հանգանակը: Բանաստեղծության վերնագիրն է «Անց կացավ օրս» (1960), որում քնարական հերոսը զրուցում է լուսնի հետ և նրա հետ կիսում իր մտորումները:

Օժտված լինելով սուր դիտողականությամբ, պատկերավոր մտածողությամբ, քնարական շնչով և լայնահուն հայացքով՝ Սահյանի պոեզիան դարձավ հայ

[1] Մկրտչյան Լ., «Զրույցներ բանաստեղծի մասին», Երևան, 1984թ., էջ 47:
[2] Հովնաթան Հ., «Խոսում է Համո Սահյանը», Երևան, 1992թ., էջ 22:

գրականության ոսկե էջերից մեկը, որով նա դարձավ մեր ժողովրդի հավերժական երթի ուղենիշներից մեկը՝ Չարենցի, Շիրազի, Սևակի և մյուս երևելիների հետ միասին:

Գրականություն

1. Հ. Սահյան, «Քարե պատարագ», Երևան, 2004:
2. Հ. Սահյան, «Քրիզանթեմ», Թրական թերթ, 1968:
3. Դ. Գասպարյան, «Հայրենիք և ճակատագրիր», Երևան, 1991:
4. Դ. Գասպարյան, «Համո Սահյան», Երևան, 2013:
5. Հ. Հովնաթան, «Խոսում է Համո Սահյանը», Երևան, 1992:
6. Լ. Մկրտչյան, «Զրույցներ բանաստեղծի հետ», Երևան, 1984:
7. «Գրական թերթ», 26.06.1971:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Միրում Բաղդասարյան - բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը: